

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

2201 «ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՀԱՄԱԼԻՐՆԵՐ, ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՑԱՆՑԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քնն.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն	Այդ թվում			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
						Ընդամենը	Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմին. պարապ-մունք	3-րդ կիս. 18 շաբ.	4-րդ կիս. 16 շաբ.	5-րդ կիս. 18 շաբ.	6-րդ կիս. 14 շաբ.	7-րդ կիս. 13 շաբ.	8-րդ կիս.
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3, 4տ		72	72			36	36					
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		5տ		54	48	6				54				
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4		54	54				54					
1.4	Իրավունքի հիմունքներ		4		36	30	6			36					
1.5	Պատմություն		3		54	54			54						
1.6	Ռուսաց լեզու		3,4տ		72	72			36	36					
1.7	Օտար լեզու		3,4տ		72	72			36	36					
1.8	Ֆիզիկական կուլտուրա		3,4տ,5,6,7տ		158		158		36	32	36	28	26		
	ԸՆԴԱՄԵՆԸ				572	402	170		198	230	90	28	26		
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		5		36	30	6				36				
2.2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5		18	18					18				
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	48	6				54				
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցություն		4		54	30	24				54				
3.2	Անվտանգություն և առաջին օգնություն		3		36	20	16		36						
	ԸՆԴԱՄԵՆԸ				90	50	40		36	54					
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
1	Բարձրագույն մաթեմատիկա														
	Անալիտիկ երկրաչափության տարրերը /Մոդուլ 1/		4		64	32	32				64				
	Մաթեմատիկական անալիզի հիմունքները /Մոդուլ 2/		3		72	36	36		72						
2	Օպերացիոն համակարգեր և միջավայր														
	Օպերացիոն համակարգեր /Մոդուլ 3/		3		54	18	36		54						
	Տեքստային փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա /Մոդուլ 4/		4տ		48	12	36			48					
3	Տեղեկատվական տեխնոլոգիաներ														
	Գործարար փաստաթղթերի մշակման և ներկայացման միջոցներ / Մոդուլ 5/		5տ		36	12	24				36				
	Էլեկտրոնային աղյուսակներ / Մոդուլ 6/		6		54	12	42					54			
	Կիրառական հավելվածների ստեղծման միջոցներ /Մոդուլ 7/		6		42	12	30					42			
4	Ճարտարագիտական գրաֆիկա														
	Երկրաչափական գծագրության հիմունքներ և պրոյեկցիոն գծագրություն /Մոդուլ 8/		3		36		36		36						
	Տեխնիկական գծագրության հիմունքներ /Մոդուլ 9/		4		32		32			32					
5	Էլեկտրատեխնիկա														
	Հաստատումն հոսանքի շղթաներ /Մոդուլ 10/		3		36	24	12		36						
	Փոփոխական հոսանքի շղթաներ /Մոդուլ 11/		3		72	48	24		72						
6	Էլեկտրոնային տեխնիկա														
	Կիսահաղորդչային նյութեր: Դիոդի և տրանզիստորի դերի նշանակությունը և աշխատանքի սկզբունքը /Մոդուլ 12/		3տ		28	20	8		28						
	Ինտեգրալային սխեմաներ և անալոգային սարքեր /Մոդուլ 13/		4տ		36	28	8			36					
	Ինֆորմացիոն արտապատկերող սարք: Թվային ինտեգրալային սարքեր		5տ		54	46	8				54				

	Համակարգչային ցանցերի դասակարգումը և հաղորդակցության ապարատային միջոցները /Մոդուլ 40/	6		36	8	28				36			
	Ինֆորմացիայի պաշտպանվածությունը լոկալ և գլոբալ ցանցերում /Մոդուլ 41/	7տ		36	8	28					36		
	Ինտերնետ գլոբալ ցանցը, համակարգչային ցանցերի արձանագրությունները /Մոդուլ 42/	7տ		36	16	20					36		
5	ՀՏՄ նախագծում, արտադրություն, շահագործում և նորոգում												
	Հաշվողական տեխնիկայի միջոցների մոդուլային նախագծման հիմունքներ /Մոդուլ 43/	5տ		36	22	14					36		
	Հաշվողական տեխնիկայի միջոցների արտադրության գործընթացի հիմունքներ /Մոդուլ 44/	5տ		36	32	4					36		
	Հաշվողական տեխնիկայի միջոցների շահագործում /Մոդուլ 45/	5տ		36	16	20					36		
	Հաշվողական տեխնիկայի միջոցների հավաքման արտադրություն /Մոդուլ 46/	6		36	14	22						36	
	Հաշվողական տեխնիկայի միջոցների ապարատաձրագրային համակարգերի գործունեության ապահովում /Մոդուլ 47/	6		36	14	22						36	
	Հաշվողական տեխնիկայի միջոցների աշխատունակության վերականգնում /Մոդուլ 48/	7		36	16	20							36
	Կուրսային նախագիծ		6										
6	Ապարատաձրագրային համակարգերի մշակման գործիքային միջոցներ												
	Ապարատաձրագրային համակարգերի գործիքային միջոցների տեխնիկական ապահովում /Մոդուլ 49/	6		28	20	8						28	
	Ապարատաձրագրային համակարգերի գործիքային միջոցների ծրագրային ապահովում /Մոդուլ 50/	7		52	30	22							52
	ԸՆԴԱՄԵՆԸ			739	411	328							
	ԸՆԴԱՄԵՆԸ			2730	1582	1148							
6.	ԸՆՏՐՈՎԻ	7տ		64	44	20							64
	ՊԱՅՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ			50				8	16	26			
	ԸՆԴԱՄԵՆԸ			2844	1626	1168		648	576	648	504	468	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ			300									
	Շաբաթվա ժամերի քանակը							36	36	36	36	36	

III. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Գործավարության հիմունքներ
2. Ռիթմիկա և պար
3. Օտար լեզու (գերմաներեն, ֆրանսերեն)
4. Թատերական արվեստ
5. Ինժեներական հոգեբանություն

IV. ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

h/h	ՊՐԱԿՏԻԿԱ	ԿԻՍԱՄՅԱԿ	ՇԱԲԱԹ
I.	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	IV	4
1.		VI	6
2.	Տեխնոլոգիական պրակտիկա առանց տեսական ուսուցման	VIII	16
3.	Նախադիպլոմային	VIII	8
	ԸՆդամենը		34

V. ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

1.	Դիպլոմային նախագծի պաշտպանություն	22.VI-28.VI	3
2.	Պետական քննություններ	08.VI-28.VI	3

VI. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ, ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԱՐՋԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

1. համակարգչային տեխնիկայի
2. էլեկտրատեխնիկայի
3. էլեկտրոնային տեխնիկայի
4. էլեկտրատեխնիկական չափումների
5. ուսուցման տեխնիկական միջոցների
6. հաշվողական տեխնիկայի միջոցների նախագծման, արտադրության և շահագործման, ցանցային տեխնոլոգիաների

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ

1. հումանիտար
2. սոցիալ-տնտեսագիտական
3. հայոց լեզվի և խոսքի մշակույթի
4. օտար լեզուների
5. քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների, էկոլոգիայի և կենսագործունեության ապահովության,
6. մաթեմատիկայի
7. ճարտարագիտական գրաֆիկայի
8. տնտեսագիտության
9. ծրագրավորման
10. հաշվողական տեխնիկայի
11. չափագիտության, ստանդարտիզացիայի և սերտիֆիկացիայի
12. տեղեկատվական տեխնոլոգիաների
13. ավարտական ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման
14. մեթոդական

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐՋԵՍՏԱՆՈՑՆԵՐ

1. էլեկտրառադիոնոտաժային
2. էլեկտրառադիոչափումների

ՄԱՐԶԱ - ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

1. մարզադահլիճ
2. մարզահրապարակ

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով՝ քոլեջի խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ (միջանկյալ) քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքները, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Յուրաքանչյուր առարկայի գծով ստուգողական աշխատանքների թիվը որոշվում է քոլեջի խորհրդի որոշմամբ՝ ուսումնամեթոդական խորհրդի ներկայությամբ: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքներին, գործնական ու սեմինար պարապմունքներին, ֆիզիկական դաստիարակության պարապմունքներին, քոլեջի խորհրդի կողմից սահմանված առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքներին, ինչպես նաև կուրսային նախագծման և արհեստանոցներում (վարժաիրապարակներում, տնտեսություններում) արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող: Ելնելով ուսուցանվող առարկաների յուրահատկությունից՝ համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ (անհատական պարապմունքներ, ուսուցման անհատակա-ստեղծագործական ձևեր և այլն): Քոլեջի խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացները, հատկապես հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, կարող են կազմակերպվել հոսքային, ինչպես նաև կոմբինացված պարապմունքների ձևով:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը՝ բայց ոչ ավելի քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Նախասիրական առարկաների ծրագրերը հաստատվում են քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կողմից՝ համապատասխան ամբիոնների, առարկայական (ցիկլային) հանձնաժողովների ներկայացմամբ:
4. Ֆիզիկական դաստիարակության առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով, մարզական ակումբների, սեկցիաների, խմբակների միջոցով:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, քննաշրջանների, պրակտիկաների, արձակուրդների ընդհանուր տևողությունը:
6. Ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաները թույլատրվում է անցկացնել կենտրոնացված ձևով կամ մաս-մաս՝ հերթափոխելով տեսական և գործնական պարապմունքների հետ: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի սահմաններում:
7. Պետական կառավարման լիազորված մարմինների կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Խորհրդատվությունների անցկացման ձևերը հաստատում է քոլեջի խորհուրդը՝ համապատասխան ամբիոնների, առարկայական (ցիկլային) հանձնաժողովների ներկայացմամբ:
9. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանված կարգի պահանջներին համապատասխան:
10. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:
11. Նպատակային պատրաստման առարկան իր մեջ ներառում է համակարգիչների արդիականացման և զարգացման հարցերը: Այդ պատճառով յուրաքանչյուր տարի, կախված համակարգչային տեխնիկայի զարգացումից, առարկայի ծրագիրը ենթարկվում է փոփոխության:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱՅԴ-3-08-001

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Դասախոսություն՝ 30 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 24 ժամ

Մուտքային պահանջները՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները.
2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.
3. նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.
4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. կատարի փաստաթղթավորում:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով:

Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,
 - ամփոփելը,
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
- դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.
- գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Դասախոսություն՝ 6 ժամ
- Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,
- բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱԱՕ 4 - 08 - 001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը մշակվել է ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման ոլորտում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական պարապմունք 16 ժամ

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. սահմանել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. պահպանել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ռադիոէլեկտրոնային սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքներն իրականացնելիս,
3. իմանալ էլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները,
4. կատարել առաջին օգնության կազմակերպումը և կիրառել անհրաժեշտ միջոցներ:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, օրենքները և աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը, մեխանիզմները և նրանց խախտման հետ կապված պատասխանատվությունը,
- գ. ճիշտ է ներկայացնում տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ և դժբախտ դեպքերի ու պատահարների փաստաթղթավորման կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, կարողանում է որոշակի եզրահանգումներ կատարել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Պահպանել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները էլեկտրոնային

սարքավորումների սպասարկման և նորոգման աշխատանքները իրականացնելիս:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում և կիրառում էլեկտրոնային սարքավորումների շահագործման և վերանորոգման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- բ. ճիշտ է սահմանում և պահպանում էլեկտրաանվտանգության կանոնները,
- գ. ճիշտ է սահմանում և պահպանում հրդեհանվտանգության կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ էլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Ճիշտ է ներկայացնում ռադիոէլեկտրոնային սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքները դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները,
- վնասվածքներ էլեկտրական հոսանքից,
- այրվածքներ զոդման աշխատանքների ժամանակ,
- օրգանիզմի թունավորում,
- հնարավոր տարբեր վնասվածքներ:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումը կատարվելու է թեսթի միջոցով, որը պարունակելու է աշխատանքների թվարկումը և հնարավոր վնասվածքները: Նա պետք է նշի, թե որ իրավիճակներում ինչ վնասվածքներ են առաջանում: Առանձին հարցերով պարզաբանվելու է յուրաքանչյուր իրավիճակում վնասվածքները կանխելու և դրանցից պաշտպանվելու քայլերը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե թեսթի առաջադրանքը կատարվում է առնվազն 60 տոկոսով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական միջոցներ, ուսումնական գրականություն, տեսաֆիլմ:

Ռեսուրսների քանակական ցուցանիշներ

- Տեսական ուսուցում 6 ժամ
- Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կատարել առաջին օգնության կազմակերպում և կիրառել անհրաժեշտ միջոցներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Ճիշտ է կատարում առաջին օգնության կազմակերպումը, կիրառելով անհրաժեշտ միջոցներ,
- արհեստական շնչառություն և սրտի աշխատանքի վերականգնում էլեկտրահարման դեպքում,
- արյան հոսքի դադարեցում և վիրակապում բաց վնասվածքների դեպքում,
- այրվածքների մշակում,
- թունավորման ժամանակ օրգանիզմի հնարավոր մաքրում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- Դասախոսություն՝ 2 ժամ
- Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԴԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

ԴԱՍԻՉԸ SՃ08-001

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը նախատեսված է ուսանողներին ծանոթացնելու մաթեմատիկական անալիզի հիմնական հասկացություններին (սահմանների տեսություն, անընդհատություն, ածանցյալ, դիֆերենցիալ և անորոշ ինտեգրալ): Մոդուլի նպատակը ուսանողների մոտ ծրագրավորման և ալգորիթմական լեզուների ուսումնասիրման համար անհրաժեշտ մաթեմատիկական մեթոդների, բանաձևերի ու հնարանքների բազայի ձևավորումն ու զարգացումն է:

ՄՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական ուսուցում՝ **36 ժամ**

Գործնական աշխատանք՝ **36 ժամ**

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Անալիտիկ երկրաչափության տարրեր» մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա հաջորդականության և ֆունկցիայի սահմանի գաղափարը, դրանց սահմանումներն ու հատկությունները,
2. կարողանա սահմանել ֆունկցիայի անընդհատությունը կետում և միջակայքում, ձևակերպել փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի հատկությունները,
3. իմանա ֆունկցիայի ածանցյալի և դիֆերենցիալի սահմանումները և դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմների ձևակերպումները,
4. կարողանա հետազոտել ֆունկցիան և կառուցել նրա գրաֆիկը,
5. իմանա հիմնական տարրական ֆունկցիաների ինտեգրման աղյուսակը և ինտեգրման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ հաջորդականության և ֆունկցիայի սահմանի գաղափարը, դրանց սահմանումներն ու հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի հաջորդականության և ֆունկցիայի սահմանի սահմանումը,
- Կարողանում է կատարել գործողություններ վերջավոր սահման ունեցող հաջորդականությունների հետ,
- Գիտի մոնոտոն հաջորդականության սահմանի գոյության ու միակության թեորեմը,
- Կարողանում է կատարել գործողություններ վերջավոր սահման ունեցող ֆունկցիաների հետ,
- Կարողանում է հաշվել սահմաններ, բացել անորոշություններ,
- Գիտի առաջին և երկրորդ մշանավոր սահմանները, օ թիվը,
- Կարողանում է բաղդատել անվերջ փոքրերը, նրանց օգնությամբ հաշվել սահմաններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին և երրորդ կետերում մշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է հինգ ենթահարց, որոնք կատարման չափանիշների երկրորդ և չորրորդից յոթերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱԿՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ սահմանել ֆունկցիայի անընդհատությունը կետում և միջակայքում, ձևակերպել փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի ֆունկցիայի անընդհատություն սահմանումը կետում և միջակայքում,
- Կարողանում է ձևակերպել Վայերշտրասի թեորեմը փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի մասին,
- Կարողանում է ձևակերպել Կոշու թեորեմը փակ միջակայքում անընդհատ ֆունկցիայի մասին,
- Գիտի աջակողմյան և ձախակողմյան անընդհատությունների ձևակերպումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է հարցումը, ինչպես նաև ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը. որը պարունակում է կատարման չափանիշների բաժնում նշված ձևակերպումների վերաբերյալ չորս ենթահարց-պնդումներ: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սեխանիկական սերտումից խուսափելու նպատակով ուսանողին առաջարկվում է կոնկրետ ֆունկցիաների օրինակների վրա ցուցադրել ձեռք բերված կարողությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱԿՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Իմանալ ֆունկցիայի ածանցյալի և դիֆերենցիալի սահմանումները և դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմների ձևակերպումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի ֆունկցիայի ածանցյալի սահմանումը,
- Պատկերացնում է ածանցյալի երկրաչափական և ֆիզիկական իմաստները,
- Կարողանում է կազմել կորի շոշափողի հավասարումը,
- Հասկանում է անընդհատության և ածանցելիության կապը,
- Գիտի հիմնական տարրական ֆունկցիաների ածանցյալների աղյուսակը,
- Կարողանում է հաշվել բարդ և հակադարձ ֆունկցիաների ածանցյալները,
- Կարողանում է հաշվել բարձր կարգի ածանցյալներ,
- Գիտի ֆունկցիայի դիֆերենցիալի սահմանումը,
- Գիտի ֆունկցիայի դիֆերենցիալի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը,
- Գիտի դիֆերենցիալի հաշվման բանաձևը,
- Կարողանում է ձևակերպել Ռոլլի և Լագրանժի թեորեմները և տալ նրանց երկրաչափական իմաստը,
- Գիտի Թեյլորի բանաձևը,
- Կարողանում է Լոպիտալի կանոնով բացել անորոշություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ. ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է ինն ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ և ութից տասներկուերորդ կետերում

նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների երրորդ, վեցերորդ, յոթերորդ և տասներեքերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական աշխատանք	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Կարողանալ հետազոտել ֆունկցիան և կառուցել նրա գրաֆիկը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի ֆունկցիայի էքստրեմումի սահմանումը և նրա գոյության անհրաժեշտ ու բավարար պայմանները,
- Կարողանում է որոշել ֆունկցիայի աճման և նվազման միջակայքերը,
- Կարողանում է պարզել ֆունկցիայի ուռուցիկությունը կետում և միջակայքում և որոշել նրա բնույթը,
- Գիտի շրջման կետի գոյության անհրաժեշտ պայմանը և կարողանում է գտնել շրջման կետերը,
- Կարողանում է գտնել ֆունկցիայի գրաֆիկի ուղղաձիգ և թեք ասիմպտոտները,
- Կարողանում է գտնել ֆունկցիայի մեծագույն ու փոքրագույն արժեքները փակ միջակայքում,
- Գիտի ֆունկցիայի հետազոտման և գրաֆիկի կառուցման ընդհանուր սխեման:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց տրվում է ֆունկցիայի հետազոտման և գրաֆիկի կառուցման առաջադրանք:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5

Իմանալ հիմնական տարրական ֆունկցիաների ինտեգրման աղյուսակը և ինտեգրման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի նախնական ֆունկցիայի և անորոշ ինտեգրալի սահմանումները,
- Գիտի անորոշ ինտեգրալի հատկությունները,
- Գիտի հիմնական տարրական ֆունկցիաների ինտեգրման աղյուսակը,
- Կարողանում է փոփոխականի փոխարինման մեթոդով կատարել ինտեգրում,
- Գիտի մասերով ինտեգրման մեթոդը և կարողանում է այն կիրառել,
- Կարողանում է ռացիոնալ կոտորակները ներկայացնել պարզ կոտորակների գումարի տեսքով և գտնել անորոշ գործակիցները,
- Կարողանում է ինտեգրել պարզագույն ռացիոնալ կոտորակները,
- Կարողանում է ինտեգրել եռանկյունաչափական և որոշ իռացիոնալ արտահայտություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ:

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երկրորդ և երրորդ կետերում նշված հասկացությունների

վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է հինգ ենթահարց, որոնք կատարման չափանիշների չորրորդի ութերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական աշխատանք	10 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱԼԻՏԻԿ ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԸ»
ԴԱՍԻՉԸ` SՃՕ8-002**

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը նախատեսված է ուսանողներին ծանոթացնելու վեկտորական հանրահաշվի և անալիտիկ երկրաչափության հիմնական հասկացություններին: Մոդուլի նպատակը ուսանողների մոտ կորոդինատների մեթոդով և վեկտորների կիրառմամբ երկրաչափական խնդիրների լուծման կարողությունների զարգացումն է:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

Տեսական ուսուցում`	32 ժամ
Գործնական աշխատանք`	32 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ ՉՈՒՆԻ

ՌԻՍՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. իմանա հիմնական հասկացությունների սահմանումներն ու հատկությունները,
2. կարողանա վեկտորների կիրառմամբ լուծել երկրաչափական խնդիրներ,
3. իմանա ուղիղ գծի, հարթության և երկրորդ կարգի կորերի հավասարումները,
4. կարողանա կորոդինատների մեթոդի օգնությամբ լուծել երկրաչափական խնդիրներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ հիմնական հասկացությունների սահմանումներն ու հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի վեկտորի սահմանումը, կարողանում է կատարել գծային գործողություններ վեկտորների հետ,
- Կարողանում է հաշվել վեկտորների սկալյար, վեկտորական և խառը արտադրյալները,
- Կարողանում է հաշվել վեկտորների կազմած անկյունը, գտնել մի վեկտորի պրոյեկցիան մյուսի ուղղության վրա, պարզել երկու վեկտորների համագիծ կամ փոխուղղահայաց լինելը,
- Կարողանում է տրված կորոդինատներով հաշվել վեկտորի երկարությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երկու ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին և երրորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջինից չորրորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ վեկտորների կիրառմամբ լուծել երկրաչափական խնդիրներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Կարողանում է հատվածը բաժանել տրված հարաբերությամբ,
- Վեկտորական արտադրյալի օգնությամբ հաշվում է եռանկյան մակերեսը,
- Կարողանում է հարթ պատկերների հայտնի գազաթների տրված կոորդինատներով գտնել անհայտ գազաթների կոորդինատները, կողմերի և անկյունագծերի երկարությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է կարճ պատասխանով առաջադրանքը. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների բաժնում նշված կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Իմանալ ուղիղ գծի, հարթության և երկրորդ կարգի կորերի հավասարումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի ուղիղ գծի հավասարումների տարբեր տեսքերը (ընդհանուր, վեկտորական, նորմալ, տրված երկու կետերով անցնող, տրված ուղղությամբ և տրված կետով անցնող) և կարողանում է կազմել դրանք,
- Կարողանում է կառուցել ուղիղը ըստ տրված հավասարման,
- Գիտի տարածության մեջ ուղիղ գծի և հարթության հավասարումները,
- Գիտի շրջանագծի, էլիպսի, պարաբոլի և հիպերբոլի կանոնական հավասարումները,
- Կարողանում է գտնել կանոնական հավասարումով տրված շրջանագծի շառավիղը և կենտրոնի կոորդինատները, էլիպսի կիսառանցքները, պարաբոլի ճյուղերի ուղղությունը, հիպերբոլի ասիմպտոտները, ինչպես նաև նրանց կիզակետերի կոորդինատները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է համակցված թեստ, որում առկա են երկու տիպի առաջադրանքներ.

ա/ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է երեք ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջին, երրորդ և չորրորդ կետերում նշված հասկացությունների վերաբերյալ պնդումներ են: Յուրաքանչյուր ենթահարցի պատասխանը պետք է ընտրել առաջարկվող չորս պատասխաններից, որոնցից միայն մեկն է ճիշտ:

բ/ Տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է չորս ենթահարց, որոնք կատարման չափանիշների երկրորդ և հինգերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական ուսուցում` 8 ժամ
- Գործնական աշխատանք` 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Կարողանալ կոորդինատների մեթոդի օգնությամբ լուծել երկրաչափական խնդիրներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Կարողանում է պարզել երկու ուղիղների, ուղղի և հարթության փոխադարձ դասավորությունը,
- Կարողանում է հաշվել կետի հեռավորությունը ուղղից և հարթությունից,
- Կարողանում է գրել տրված նորմալ վեկտորն ունեցող և տրված կետով անցնող հարթության հավասարումը, հետագոտել հարթության ընդհանուր հավասարումը և այն բերել նորմալ տեսքի:
- Կարողանում է գրել երեք կետերով անցնող հարթության հավասարումը,
- Կարողանում է գտնել կետի հեռավորությունը հարթությունից:
- Կարողանում է պարզել հարթությունների փոխադարձ դասավորությունը և գտնել նրանց կազմած անկյունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Որպես արդյունքի յուրացումը գնահատելու միջոց օգտագործվում է տրված պատասխանով առաջադրանք. այս առաջադրանքը պարունակում է հինգ ենթահարց, որոնք կատարման չափանիշների առաջինից հինգերորդ կետերի վերաբերյալ հաշվարկային խնդիրներ են: Յուրաքանչյուր ենթահարցի խնդիրը պետք է լուծել և ստանալ տրված պատասխանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակահարմար է կիրառել տիպօրինակով կատարման մեթոդը: Ուսանողը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ և բանաձևերի աղյուսակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական ուսուցում` 8 ժամ
- Գործնական աշխատանք` 6 ժամ

«ՕՊԵՐԱՑԻՈՆ ՉԱՄԱԿԱՐԳԵՐ» ՍՈՐՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ

ՂԱՍԻՉԸ ՏԵՕ8-003

ՍՈՐՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Չամակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ սովորողներին ուսուցանել համակարգչի ղեկավարող ծրագրերը՝ օպերացիոն համակարգերը, հաշվողական տեխնիկայի զարգացման ուղղությունները, օպերացիոն համակարգի հիմնադրույթները, կազմությունը, համակարգչի բեռնավորման սկզբունքները, գաղափար այլ օպերացիոն համակարգերի մասին, անհատական համակարգիչների օգտագործման բնագավառները, համակարգչային տեխնոլոգիաների գործնական կիրառումների հիմնադրույթները օպերացիոն համակարգի և օգտագործողի համագործակցության կանոնակարգը, նրա ստանդարտ ծրագրերի օգտագործումը փաստաթղթերի պատրաստման, նկարների պատրաստման և մշակման համար, ինչպես նաև Internet ցանցի, E mail էլեկտրոնային փոստի հիմնադրույթները և ինֆորմացիոն ռեսուրսներին դիմելու WWW (World Wide Web) ծառայությունների դրույթները:

ՍՈՐՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական ուսուցում՝ 18 ժամ

Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐ

ՉՈՒՄԻ

ՈՒՍՈՒՄՆԱՊՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա հաշվողական տեխնիկայի զարգացման պատմությունը, անհատական համակարգիչների օգտագործման բնագավառները, անհատական համակարգիչների սերունդների առանձնահատկությունները, հիմնական պարամետրերը և ծրագրային ապահովումը, հիմնական օպերացիոն համակարգերի ղեկավարման պարզագույն հրամանները, օպերացիոն համակարգերի գրաֆիկական ինտերֆեյսը որպես տեսանելի կապող օղակ, ինտերֆեյսի կարգավորումը, կառուցվածքային փոփոխություններ, սարքերի ու ծրագրերի տեղադրում և կարգավորում, կապի ծառայությունները և Internet-ից օգտվելու հիմնադրույթները:
2. կարողանա ստեղծել, վերանվանել, պատճենել հեռացնել ֆայլեր և թղթապանակներ օպերացիոն համակարգերի միջավայրում, վարժ աշխատել ֆայլերի, թղթապանակների, կանչագրերի և սկավառակների հետ, աշխատել ստանդարտ գրաֆիկական և տեքստային խմբագրիչներով, կատարել ինտերֆեյսի կառուցվածքային փոփոխություններ:
3. օգտագործի տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ)՝ հայկական, կիրիլիկական, լատինական՝ հայալեզու, ռուսալեզու և լատինական լեզուներով, ստուգող, վերականգնող և հակավիրուսային ծրագրեր, արխիվատորներ, կարգավորի տարածաշրջանային ստանդարտները:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ հաշվողական տեխնիկայի զարգացման պատմությունը, անհատական համակարգիչների օգտագործման բնագավառները, անհատական համակարգիչների սերունդների առանձնահատկությունները, հիմնական պարամետրերը և ծրագրային ապահովումը, հիմնական օպերացիոն համակարգերի ղեկավարման պարզագույն հրամանները, օպերացիոն համակարգերի գրաֆիկական ինտերֆեյսը որպես տեսանելի կապող օղակ, ինտերֆեյսի կարգավորումը, կառուցվածքային փոփոխություններ, սարքերի ու ծրագրերի տեղադրում և կարգավորում, կապի ծառայությունները և Internet-ից օգտվելու հիմնադրույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի հաշվողական տեխնիկայի զարգացման պատմությունը, անհատական համակարգիչների օգտագործման բնագավառները, անհատական համակարգիչների սերունդների առանձնահատկությունները, հիմնական պարամետրերը և ծրագրային ապահովումը,
- գիտի օպերացիոն համակարգերի դերը, առանձնահատկությունները, ղեկավարման հիմնական հրամանները, ստանդարտ ծրագրերը և միջավայրում աշխատող ծրագրերի օգտագործման ընդհանուր դրույթները,
- կատարում է օպերացիոն համակարգի ինտերֆեյսի կարգավորում, կառուցվածքային փոփոխություններ,

սարքերի ու ծրագրերի տեղադրում և կարգավորում, օգտվում է Internet-ի փնտրող համակարգերից և կապի ծառայություններից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի համապատասխան հարցեր պարունակող հարցաթերթիկ, առաջադրելով շարադրել դրա կատարման անհրաժեշտ հաջորդականությունը:

Նա պետք է կարողանա.

- ա. ցույց տալ համակարգչի առանձին տեղամասերը և սարքերը, իմանա նրանց անվանումները և նախատեսվածությունը, սարքերի ծրագրային ապահովման անհրաժեշտությունը, դրայվերների տեղադրման խնդիրները և անվտանգ աշխատանքի կանոնները,
- բ. ստեղծել թղթապանակներ, ֆայլեր, ծրագրերի կանչագրեր, կատարել ստանդարտ ծրագրերի գործարկում, ֆայլերի պատճենում, վերանվանում, հեռացում,
- գ. կատարի օպերացիոն համակարգի ինտերֆեյսի փոփոխություններ, ծրագրերի տեղադրում և հեռացում, սարքերի ռեժիմների կարգավորում, էլեկտրոնային փոստի ստեղծում, անհրաժեշտ ինֆորմացիայի փնտրում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքների ուսուցանումն իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկեր, պրոյեկցիոն սարք և դիդակտիկ պարագաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ ստեղծել, վերանվանել, պատճենել հեռացնել ֆայլեր և թղթապանակներ օպերացիոն համակարգերի միջավայրում, վարժ աշխատել ֆայլերի, թղթապանակների, կանչագրերի և սկավառակների հետ, աշխատել ստանդարտ գրաֆիկական և տեքստային խմբագրիչներով, կատարել ինտերֆեյսի կառուցվածքային փոփոխություններ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիշտ է կատարում ֆայլերի, թղթապանակների, ծրագրերի կանչագրերի ստեղծումը:
- Գիշտ է կատարում ֆայլերի, թղթապանակների, ծրագրերի կանչագրերի պատճենումը և տեղափոխումը:
- Գիշտ է կատարում ֆայլերի, թղթապանակների, ծրագրերի կանչագրերի վերանվանումը:
- Գիշտ է կատարում օպերացիոն համակարգի ինտերֆեյսի կառուցվածքային փոփոխությունները:
- Գիշտ է կատարում օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերով աշխատանքներ:
- Գիշտ է կատարում սկավառակների վրա ինֆորմացիայի պատճենման, տեղափոխման, ֆորմատավորման և ստուգման աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կառաջադրվի ստեղծել թղթապանակ, գրաֆիկական և տեքստային ֆայլեր, ֆայլերում օբյեկտների ներդրման աշխատանքներ, կատարել ֆայլերի և թղթապանակների հետ օգտագործվող հիմնական հրամանները մկնիկի աջ սեղմակի և կրճատ բանալիների օգտագործմամբ, կատարել նրանց հատկությունների ստուգում, հատկանիշների տեղադրում և հեռացում, էլեկտրոնային փոստից և WWW ծառայություններից ինֆորմացիայի փնտրման հիմնադրույթները:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռքբերված, եթե ուսանողը կարողանա ճիշտ կատարել նշված գործողությունները, ընտրել անհրաժեշտ գործիքները, հրամանները, պաշտպանի աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնները:

Այս առաջադրանքը կատարելիս պետք է ճիշտ ներկայավնի օպերացիոն համակարգերի առանձնահատուկ պահերը, որոնց միջոցով կազմակերպվում է օգտագործողի և համակարգչի երկխոսությունը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր ուսանող պետք է կատարի ինֆորմացիայի պահպանման, տեղափոխման, մշակման աշխատանքներ, կատարի ստանդարտ աշխատող ծրագրեր և իմանա տարբեր օպերացիոն համակարգերի առանձնահատկությունները, միջավայրերը: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել գրականություն, մեթոդական ուղեցույց և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Օգտագործել տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ)՝ հայկական, կիրիլիկական, լատինական՝ հայալեզու, ռուսալեզու և լատինական լեզուներով, ստուգող, վերականգնող և հակավիրուսային ծրագրեր, արխիվատորներ, կարգավորի տարածաշրջանային ստանդարտները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիշտ է օգտագործում տարբեր ազգային տառատեսակները:
- Գիշտ և վարժ է կատարում տեքստային ինֆորմացիայի ստեղծման և մշակման գործողությունները:
- ճիշտ է կատարում ֆայլերի հակավիրուսային ստուգման և արխիվացման աշխատանքները:
- կարողանում է տեղադրել ծրագրեր, դրայվերներ, հաստատել տարածաշրջանային ստանդարտները:
- գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի տարբեր լեզուներով տեքստերի նմուշներ, ճկուն սկավառակներ և կտրամադրվի անհրաժեշտ հակավիրուսային և արխիվատոր ծրագրեր: Պետք է տալ որոշակի ժամանակ, որի ընթացքում հնարավոր է կատարել տեքստի և նկարի ստեղծման, խմբագրման, պահպանման, ստուգման և արխիվացման աշխատանքներ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը առաջադրանքը իրականացնում է անսխալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական աշխատանքների և լաբորատոր աշխատանքների ձևով, յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով յուրահատուկ մոտեցում, տրամադրելով գրականություն, մեթոդական ուղեցույց: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ պլակատներ, պրոյեկցիոն սարք, ուսումնական տեսաֆիլմ՝ ցուցադրման սարքերով:

Յուրաքանչյուր ուսանող պետք է գործնական պարապմունքների ընթացքում կատարի բոլոր գործողությունները, իմանա տարբեր ծրագրային վարկածներում եղած տարբերությունները, կիրառի ստացած հիմնային գիտելիքները նոր վարկածների օգտագործման ժամանակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

«ՏԵՔՍՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄՈԴՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ

ԴԱՄԻՉԸ ՏԵ08-004

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը նախատեսում է ուսումնասիրել ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը, ուսումնասիրման առարկան, տարածումը և ընդգրկած բնագավառները, տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց:

Այն նախատեսում է նաև զանգվածային կիրառության խմբագրիչների միջոցով սովորողներին ուսուցանել տեքստերի մշակման, պահպանման, ձևավորման եղանակները, որոնք կիրառվում են ցանկացած բնագավառի աշխատատեղերում համակարգչային գրագրության կազմակերպման համար, ինչպես նաև գործարար գրագրության հիմունքները:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

Տեսական ուսուցում՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Օպերացիոն համակարգեր» մոդուլից ստացած տեսական գիտելիքները և գործնական հմտությունները

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը, ուսումնասիրման առարկան, տարածումը և ընդգրկած բնագավառները, տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց, տեքստերի մշակման տեխնոլոգիան, տեքստային խմբագրիչի ինտերֆեյսում տեղ գտած տեղամասերի և գործիքների նշանակությունը, նրանց տեղադրման ու հեռացման միջոցները, ռեժիմների կարգավորման հրամանները, տեքստերի մուտքագրման ու պահպանման միջոցները որպես տեքստային տարբեր ֆորմատի փաստաթղթեր, որպես նմուշ, նմուշների ներդրման նշանակությունը տիպային փաստաթղթեր մշակելու և այդ աշխատանքների ավտոմատացումը իրագործելու գործում, տեքստերի ձևավորման հրամանները, տառատեսակների ներկայացումը տարբեր ոճերով ու չափերով, տառերի և տողերի միջև հեռավորությունների, սահմանների, լուսանցքների տեղադրման ու փոփոխման հրամանները, տողերի դասավորման հրամանները (ծախից, աջից, մեջտեղից ու երկկողմանի հավասարեցումով), փաստաթուղթը տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով ձևավորելու հրամաններն ու գործիքները, տարբեր օժանդակ ծրագրերի ինչպես նաև գրաֆիկական և տեքստային խմբագրիչների միջև կապ ապահովող միջոցները:
2. Կարողանա պատրաստել դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր՝ ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, կատարել էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, ստեղծել, վերանվանել, պատճենել հեռացնել ֆայլերը տեքստային խմբագրիչի միջավայրում, կատարել հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգիչ:
3. Օգտագործի տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ)՝ հայկական, կիրիլիկական, լատինական՝ հայալեզու, ռուսալեզու և լատինական լեզուներով, ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշները, նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը, ուսումնասիրման առարկան, տարածումը և ընդգրկած բնագավառները, տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց, տեքստերի մշակման տեխնոլոգիան, տեքստային խմբագրիչի ինտերֆեյսում տեղ գտած տեղամասերի և գործիքների նշանակությունը, նրանց տեղադրման ու հեռացման միջոցները, ռեժիմների կարգավորման հրամանները, տեքստերի մուտքագրման ու պահպանման միջոցները որպես տեքստային տարբեր ֆորմատի փաստաթղթեր, որպես նմուշ, նմուշների ներդրման նշանակությունը տիպային փաստաթղթեր մշակելու և այդ աշխատանքների ավտոմատացումը իրագործելու գործում, տեքստերի ձևավորման հրամանները, տառատեսակների ներկայացումը տարբեր ոճերով ու չափերով, տառերի և տողերի միջև հեռավորությունների, սահմանների, լուսանցքների տեղադրման ու փոփոխման հրամանները, տողերի դասավորման հրամանները (ծախից, աջից, մեջտեղից ու երկկողմանի հավասարեցումով), փաստաթուղթը տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով ձևավորելու հրամաններն ու գործիքները, տարբեր օժանդակ ծրագրերի ինչպես նաև գրաֆիկական և տեքստային խմբագրիչների միջև կապ ապահովող միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- գիտի ինֆորմացիոն տեխնոլոգիաների փուլերը, ուսումնասիրման առարկան, հաշվողական տեխնիկայի զարգացման պատմությունը, տեքստային պրոցեսորների դերը որպես ինֆորմացիայի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց, տեքստերի մշակման տեխնոլոգիան,
- գիտի տեքստային խմբագրիչի ինտերֆեյսում տեղ գտած տեղամասերի և գործիքների նշանակությունը, նրանց տեղադրման ու հեռացման միջոցները, ռեժիմների կարգավորման հրամանները,
- գիտի տեքստերի մուտքագրման ու պահպանման միջոցները որպես տեքստային տարբեր ֆորմատի

փաստաթղթեր, որպես նմուշ, նմուշների ներդրման նշանակությունը տիպային փաստաթղթեր նշակելու և այդ աշխատանքների ավտոմատացումը իրագործելու գործում,

- գիտի տեքստերի ձևավորման հրամանները, տառատեսակների ներկայացումը տարբեր ոճերով ու չափերով, տառերի և տողերի միջև հեռավորությունների, սահմանների, լուսանցքների տեղադրման ու փոփոխման հրամանները, տողերի դասավորման հրամանները (ձախից, աջից, մեջտեղից ու երկկողմանի հավասարեցումով),
- գիտի փաստաթուղթը տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով ձևավորելու հրամաններն ու գործիքները, տարբեր օգնող ծրագրերի հետ կապ ապահովող տեղամասերը, ինչպես օպերացիոն համակարգի միջավայրում աշխատող տարբեր գրաֆիկական և տեքստային խմբագրիչների միջև:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի կիրառական փաստաթղթի նմուշ, առաջադրելով կատարել տեքստային խմբագրիչի օգնությամբ: Նա պետք է կարողանա.

ա. կատարել տեքստային խմբագրիչի գործիքների վահանակների, գործիքների տեղադրում և հեռացում, ինտերֆեյսի կարգավորում,

բ. ստեղծել պարզագույն տեքստային փաստաթղթեր և պահպանել տարբեր ֆորմատներով, ինչպես նաև պատրաստել փաստաթուղթ՝ նմուշի հիման վրա,

գ. ստանալ որևէ փաստաթուղթ և օգտագործել տառերի ու տողերի ձևավորում,

դ. փաստաթղթում տեղադրել նկար, սիմվոլ և ներդրված օբյեկտ:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ

Արդյունքների ուսուցանումն իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկեր, պրոյեկցիոն սարք և դիդակտիկ պարագաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ պատրաստել դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր` ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, կատարել էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, ստեղծել, վերանվանել, պատճենել հեռացնել ֆայլերը տեքստային խմբագրիչի միջավայրում, կատարել հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգիչ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է կատարում տեքստային փաստաթղթի ստեղծման գործողությունները վերը նշված փաստաթղթերից որևէ մեկի պատրաստման օրինակի վրա:
- ճիշտ է կատարում փաստաթուղթը անհրաժեշտ ոճերով ձևավորման աշխատանքները, բազմաէջ փաստաթղթերի համարակալումը և դիտումը տպելուց առաջ:
- ճիշտ է կատարում տեքստային խմբագրիչի միջավայրում ֆայլերի ստեղծման ու պահպանման գործողությունները:
- ապահովում է աշխատանքի անվտանգության և տեղեկատվության պահպանումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կառաջադրվի ստեղծել թղթապանակ օպերացիոն համակարգի միջավայրում, ֆայլ, որը կպարունակի որևէ կիրառական փաստաթղթի ձև` անհրաժեշտ ինֆորմացիայով, գրաֆիկական պատկերով: Կարողությունները կգնահատվի յուրաքանչյուր էլեմենտի կատարումը հաշվի առնելով:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռքբերված, եթե ուսանողը կարողանա ճիշտ կատարել նշված գործողությունները, ընտրել անհրաժեշտ գործիքները, հրամանները, պաշտպանի աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնները:

Այս առաջադրանքը կատարելիս պետք է ճիշտ ներկայանի տեքստային խմբագրիչի առանձնահատուկ պահերը, որոնց միջոցով կազմակերպվում է օգտագործողի և համակարգիչի երկխոսությունը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր ուսանող պետք է կատարի ինֆորմացիայի մշակման, պահպանման, տեղափոխման, մշակման աշխատանքները, իմանա տարբեր տեքստային խմբագրիչների առանձնահատկությունները, միջավայրերը: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել գրականություն, մեթոդական ուղեցույց և այլ դիդակտիկ պարագաներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Օգտագործել տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ)՝ հայկական, կիրիլիկական, լատինական՝ հայալեզու, ռուսալեզու և լատինական լեզուներով, ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշները, նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիշտ է օգտագործում տարբեր ազգային տառատեսակները:
- Վարժ է օգտագործում տեքստային ինֆորմացիայի ստեղծման և մշակման գործողությունները ստանդարտ և օգտագործողի կողմից պահպանված նմուշների հիման վրա:
- Գիշտ է օգտագործում տպող սարքերը:
- Գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի տարբեր լեզուներով տեքստերի նմուշներ: Պետք է տալ որոշակի ժամանակ, որի ընթացքում հնարավոր է կատարել տեքստի և նկարի ստեղծման, խմբագրման, պահպանման, ստուգման, նկարի տեղադրման ու ձևափոխման աշխատանքներ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը առաջադրանքը անսխալ իրականացնում է սահմանված ժամկետում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը իրականացվում է լաբորատոր աշխատանքների ձևով, յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով յուրահատուկ մոտեցում, տրամադրելով գրականություն, մեթոդական ուղեցույց: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ պլակատներ, պրոյեկցիոն սարք, ուսումնական տեսաֆիլմ՝ ցուցադրման սարքերով:

Յուրաքանչյուր ուսանող պետք է լաբորատոր աշխատանքների ընթացքում կատարի բոլոր գործողությունները, իմանա տարբեր ծրագրային վարկածներում եղած տարբերությունները, կիրառի ստացած հիմնային գիտելիքները նոր վարկածների օգտագործման ժամանակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՐԾԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ»

ԴԱՄԻՉԸ ՏԵ08-005

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը նախատեսում է ուսումնասիրել գործարար գրագրության և հաղորդակցության հիմունքները, դիմելաձևերը, նամակագրական կապի ապահովման միջոցները ցանցային միջավայրում, հրամանների, պայմանագրերի, կենսագրական տվյալների ձևերի մշակման առանձնահատկությունները և տեքստային պրոցեսորների դերը որպես տեքստային փաստաթղթերի ստեղծման, մշակման, խմբագրման և պահպանման հիմնական միջոց:

Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողների մոտ պետք է ձևավորված լինեն խորը գիտելիքներ և կայուն իմացություն՝ որակավորման բնութագրերին համապատասխանող պահանջներով:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

Տեսական ուսուցում՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 24 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Օպերացիոն համակարգեր» և «Փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա» մոդուլները:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա գործարար գրագրության հիմնադրույթները, դիմելաձևերը, պայմանագրերի, ակտերի, դիմումների, համաձայնագրերի, տիպային նամակների օգտագործման հիմնական նպատակը, այդ տեքստային փաստաթղթերի ստեղծման, մշակման, խմբագրման, տիպայնացման և պահպանման հիմնական միջոցները:
2. Կարողանա պատրաստել դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր՝ ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, կատարել էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, կատարել հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգիչ:
3. Օգտագործի տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ)՝ հայկական, կիրիլիկական, լատինական՝ հայալեզու, ռուսալեզու և լատինական լեզուներով, խմբագրիչում գետեղված և օգտագործողի կողմից պահպանված նմուշները, նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ գործարար գրագրության հիմնադրույթները, դիմելաձևերը, պայմանագրերի, ակտերի, դիմումների, համաձայնագրերի, տիպային նամակների օգտագործման հիմնական նպատակը, այդ տեքստային փաստաթղթերի ստեղծման, մշակման, խմբագրման, տիպայնացման և պահպանման հիմնական միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- գիտի գործարար գրագրության հիմնադրույթները, դիմելաձևերը,
- գիտի տիպային փաստաթղթերի պատրաստման ստանդարտները
- գիտի պայմանագրերի, ակտերի, դիմումների, համաձայնագրերի, տիպային նամակների օգտագործման հիմնական նպատակը,
- գիտի այդ փաստաթղթերի ստեղծման, մշակման, խմբագրման միջոցները,
- գիտի փաստաթղթերի տիպայնացման և պահպանման հիմնական միջոցները,
- գիտի տարբեր գրաֆիկական պատկերներով ու սիմվոլներով ձևավորելու հրամաններն ու գործիքները, տարբեր օգնող ծրագրերի հետ կապ ապահովող տեղամասերը,
- գիտի փաստաթղթերի ստացման և առաքման ձևերը ֆաքսիմիլային ապարատների միջոցով, հեռախոսագծերի օգնությամբ, Internet համակարգչային ցանցի, էլեկտրոնային փոստի հատուկ ծառայությամբ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի կիրառական փաստաթղթի նմուշ (նշելով փաստաթղթի ձևի և բովանդակության հետ կապված առաջադրանքներ)՝ առաջադրելով շարադրել դրա կատարման անհրաժեշտ հաջորդականությունը: Միաժամանակ նա պետք է ներկայացնի փաստաթղթի կատարման կանոնների անհրաժեշտությունը դրա հետագա խմբագրման և պահպանման համար: Նրան կտրվի նաև որոշակի ժամանակ, որի ընթացքում հնարավոր է կատարել նշված գործողությունները:

Նա պետք է կարողանա.

- պատրաստել տարբեր քանակի սյուներով և տողերով աղյուսակներ, վարժ ներածի տվյալներ և ձևավորի եզրագծման գործիքների օգտագործմամբ,
- կատարել թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ ներկառուցված ֆունկցիաների օգնությամբ,
- պատրաստել գործարարական պայմանագրեր,
- կատարել գրաֆիկական պատկերի տեղադրում տեքստի մեջ, տեքստի վերադասավորում նկարի շուրջը, տեքստի որոշակի հատվածի փնտրում և փոխարինում,
- ավարտել աշխատանքը սահմանված ժամանակի ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է գործողությունները տրված հաջորդականությամբ և հիմնավորում այն տրված ժամանակի ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքների ուսուցանումն իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկեր, պրոյեկցիոն սարք և դիդակտիկ պարագաներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական ուսուցում` 4 ժամ
- Գործնական աշխատանք` 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ պատրաստել դիմումներ, նամակներ, տեղեկանքներ, հուշագրեր, հրամաններ, հայտարարագրեր, երաշխավորագրեր, պայմանագրեր` ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով, կենսագրական տվյալներով փաստաթղթերի նմուշներ, կատարել էջի պարամետրերի հաստատում, էջերի համարակալում և տպում, կատարել հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգչի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիշտ է կատարում տեքստային փաստաթղթի ստեղծման գործողությունները վերը նշված փաստաթղթերից որևէ մեկի պատրաստման օրինակի վրա:
- Գիշտ է կատարում փաստաթղթի անհրաժեշտ ոճերով ձևավորման աշխատանքները, բազմաէջ փաստաթղթերի համարակալումը և դիտումը տպելուց առաջ:
- Գիշտ է կատարում ֆայլերի ստեղծման ու պահպանման գործողությունները:
- Գիշտ է կատարում հղումներ ցանցային տպիչին կամ ցանցի որևէ համակարգչի:
- Գիշտ է կատարում փաստաթղթում աղյուսակների ստեղծման և մշակման գործողությունները որևէ գործարարական փաստաթղթի պատրաստման օրինակի վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կառաջադրվի պատրաստել տարբեր քանակի սյուներով և տողերով աղյուսակներ, վարժ ներածել տվյալներ և ձևավորել եզրագծման գործիքների օգտագործմամբ, կատարել թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ` ներկառուցված ֆունկցիաների օգնությամբ, վարժ աշխատել աղյուսակների, վանդակների ու նրանց տվյալների հետ, կառուցել գրաֆիկներ և դիագրամներ, կատարել տեքստի որոշակի հատվածի փնտրման, փոխարինման և ուղղագրության ու ոճային սխալի ուղղման գործողություններ, ինչպես նաև ստանալ և առաքել փաստաթուղթը ֆաքսիմիլային ապարատների, հեռախոսագծերի օգնությամբ, Internet մոլորակային համակարգչային ցանցի, էլեկտրոնային փոստի հատուկ ծառայությամբ:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռքբերված, եթե ուսանողը կարողանա ճիշտ կատարել նշված գործողությունները, ընտրել անհրաժեշտ գործիքները, հաստատել փաստաթղթի սահմանները, ոճերը, օգտագործի ֆաքսիմիլային ապարատը, տպիչը, թարգմանիչ ծրագրեր, ուղղագրության ստուգման, սխալների ուղղման միջոցները, դիագրամների կառուցիչը, պաշտպանի աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնները:

Այս առաջադրանքը կատարելիս պետք է ճիշտ ներկայավնի փաստաթղթի մշակման առանձնահատուկ պահերը, որոնք կկիրառվեն նաև նմանօրինակ տիպային փաստաթղթերի պատրաստման դեպքում

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր ուսանող պետք է կատարի և իմանա փաստաթղթերի մշակման տեխնոլոգիային առնչվող ցանկացած հարց: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել տիպային փաստաթղթերի նմուշներ, գրականություն, մեթոդական ուղեցույց և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական ուսուցում` 4 ժամ
- Գործնական աշխատանք` 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Օգտագործել տեքստի պատրաստման համար տարբեր ազգային տառատեսակներ (այբուբեններ)՝ հայկական, կիրիլիկական, լատինական՝ հայալեզու, ռուսալեզու և լատինական լեզուներով, խմբագրիչում զետեղված և օգտագործողի կողմից պահպանված նմուշները, նոր տիպային փաստաթղթերի պատրաստման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Եիշտ է օգտագործում տարբեր ազգային տառատեսակները:
- Վարժ է օգտագործում տեքստային ինֆորմացիայի ստեղծման և մշակման գործողությունները խմբագրիչի միջավայրում զետեղված և օգտագործողի կողմից պահպանված նմուշների հիման վրա:
- Եիշտ է օգտագործում տախիչը:
- Գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության և ինֆորմացիայի պահպանման կանոնները:
- Ծիշտ է օգտագործում թարգմանիչ ծրագրերը և կատարում ուղղագրության ստուգում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի որոշակի թեմայով հոլովակի պատրաստում որոշակի սահմանված ժամանակի ընթացքում: Նա պետք է մշակի թեմայի բովանդակությունը, որոշի անհրաժեշտ դրվագների քանակը, յուրաքանչյուր դրվագում ներառվող ինֆորմացիայի ծավալը, հաշվի առնելով փաստաթուղթը տեսանելի ու պարզ ներկայացնելու պահանջները: Հոլովակի պատրաստման ընթացքում ուսանողը պետք է պահպանի ինֆորմացիան, կարողանա օգտագործել ներդրված օբյեկտներ, ստանդարտ գործիքներով ստեղծել թեմային համապատասխան գրաֆիկական պատկերներ, դիմի որևէ WWW ծառայությունում գրանցված տարբեր թեմաներին առնչվող փաստաթղթերի, տրված հանձնարարությանը համապատասխանող նյութը կրճատել և տեղադրել դրվագում, զետեղել ծառայություններում գործարար բնույթի ինֆորմացիա: Պետք է ուշադրություն դարձնել նաև աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնների պահպանման հանգամանքին: Արդյունքի ուսուցումը կհամարվի բավարար, եթե ուսանողը տրված թեմայով հոլովակը պատրաստի սահմանված ժամանակի ընթացքում, պահպանած լինի հոլովակի ցուցադրման էֆեկտների բավարար չափի օգտագործումը և անսխալ կատարի մշակած գործողությունները: Թույլատրելի որոշ շեղումներ, որոնք կապված են նրա բովանդակության լիարժեքության և սահմանված ժամանակի մեջ չտեղավորվելու հետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը խորհուրդ է տրվում կատարել լաբորատոր աշխատանքների ձևով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ պլակատներ, պրոյեկցիոն սարք, ուսումնական տեսաֆիլմ՝ ցուցադրման սարքերով: Լաբորատոր աշխատանքների կատարման ընթացքում յուրաքանչյուր ուսանող պետք է կատարի բոլոր գործողությունները տարբեր ձևերի գործարար փաստաթղթերի նմուշների վրա, ձեռք բերի բավարար հմտություններ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

- Տեսական ուսուցում՝ 4 ժամ
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ»
ԴԱՍԻՉԸ ՏԵ08-006**

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը նախատեսում է համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողներին սովորեցնել էլեկտրոնային աղյուսակների պատրաստման, տարբեր տիպերի տվյալների մուտքագրման, ձևավորման, մեծ քանակի տվյալների պահպանման, գործնական բնույթ կրող աղյուսակներում տվյալների մուտքագրման, պահպանման, թվային արժեքների հետ թվաբանական գործողությունների կատարման խնդիրները, ինչպես նաև տվյալների դասակարգման, բազմաէջ և բազմաթերթ աղյուսակների հետ աշխատելու միջոցները, աշխատանքների ժամանակային դիագրամների կազմումը: Մոդուլը պարունակում է համակարգչային տեխնոլոգիաների գործնական կիրառումների հիմնադրույթները էլեկտրոնային աղյուսակների պատրաստման համար, ինչպես նաև զանգվածային կիրառություն ունեցող աղյուսակային պրոցեսորների ընդլայնված հնարավորություններն ու գործնական կիրառությունները հաշվապահական, վիճակագրական, բանկային և այլ համակարգերում հաշվարկային գործողություններն ու տվյալների հետազոտության խնդիրները ավտոմատացնելու համար: Իր հերթին գիտելիքները կօգտագործվեն տարբեր ծրագրային համակարգերում տվյալների բազային համակարգերի մշակման համար:

ՄՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական ուսուցում՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 42 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՋՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Գործարար փաստաթղթերի մշակման ու ներկայացման միջոցներ» մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա աղյուսակային պրոցեսորների դերը, կառուցվածքը, տվյալների տիպերը, ֆունկցիաները, գործիքները, էլեկտրոնային աղյուսակների պատրաստման, ձևավորման, տվյալների մուտքագրման և տարբեր տիպերի տվյալների հետ աշխատանքի սկզբունքները, աշխատանքային գրքի, թերթերի հետ աշխատանքի սկզբունքները, ժամանակային դիագրամների կառուցման ձևերը:
2. Կատարի էլեկտրոնային աղյուսակների և ձևերի մշակում, պահպանում որպես մուշ, հաշվարկային գործողություններ թվային, դրամական, հաշվապահական և այլ տվյալների հետ, օգտագործի ֆունկցիաները:
3. Կատարի տվյալների հետազոտում, մակրոհրամանների օգտագործում տվյալների կազմակերպման ավտոմատացման համար, աշխատանքային գրքի թերթերի ավելացում, հեռացում, էջի պարամետրերի հաստատում, դիտարկում և տպում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ աղյուսակային պրոցեսորների դերը, կառուցվածքը, տվյալների տիպերը, ֆունկցիաները, գործիքները, էլեկտրոնային աղյուսակների պատրաստման, ձևավորման, տվյալների մուտքագրման և տարբեր տիպերի տվյալների հետ աշխատանքի սկզբունքները, աշխատանքային գրքի, թերթերի հետ աշխատանքի սկզբունքները, ժամանակային դիագրամների կառուցման ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- գիտի աղյուսակների հետ օգտագործվող հրամանային մենյուի կետերը, աղյուսակների վանդակների ֆորմատավորման և եզրագծման գործիքների ու հրամանների նշանակությունը, աղյուսակներում տարբեր տիպերի տվյալների մուտք, խմբագրում և աղյուսակի ձևավորում:
- գիտի թվային տվյալներ պարունակող աղյուսակներում թվային արժեքների հետ հաշվարկային գործողություններ կատարել գործողության նշանների և ֆունկցիաների օգնությամբ,
- գիտի տարատեսակ գրաֆիկներ ու դիագրամներ կառուցել,
- գիտի աշխատանքային թերթերը վերանվանել, ավելացնել, հեռացնել, պահպանել, հաստատել ինֆորմացիայի անվտանգության ռեժիմներ, դիտարկել տպելուց առաջ և տպել,
- գիտի նույնատիպ ավտոլրացման, հաճախակի կրկնվող ցուցակների ստեղծման կարգը,
- գիտի ամսաթվային, թվային տվյալներ պարունակող վանդակների ֆորմատավորման կարգը, սխալի հաղորդագրությունները,

- գիտի մակրոսների օգտագործման միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի կիրառական աղյուսակի նմուշ (նշելով փաստաթղթի ձևի և բովանդակության հետ կապված առաջադրանքներ)՝ առաջադրելով շարադրել դրա կատարման անհրաժեշտ հաջորդականությունը: Միաժամանակ նա պետք է ներկայացնի փաստաթղթի կատարման կանոնների անհրաժեշտությունը դրա հետագա խմբագրման և պահպանման համար: Նրան կտրվի նաև որոշակի ժամանակ, որի ընթացքում հնարավոր է կատարել նշված գործողությունները:

Նա պետք է կարողանա.

- պատրաստել տարբեր քանակի սյուներով և տողերով աղյուսակներ, վարժ ներածի տվյալներ և ձևավորի եզրագծման գործիքների օգտագործմամբ,
- կատարել թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ ներկառուցված ֆունկցիաների և վանդակում ներածված գործողության նշանների օգնությամբ,
- ստեղծել բազմաթիվ աշխատանքային գիրք և թերթերը անվանափոխել առաջադրանքի համապատասխան անուններով,
- միաժամանակ ցուցադրել տարբեր աշխատանքային թերթերը և կապ հաստատել թերթերի միջև, ցույց տալ մի թերթի կապված վանդակում կատարված փոփոխության հետևանքով տեղի ունեցող փոփոխությունը մյուս թերթի համապատասխան վանդակում,
- սառեցնել տողը կամ սյունը, թաքցնել, խմբավորել վանդակները,
- կատարել կառուցել աղյուսակների ժամանակային դիագրամներ,
- ավարտել աշխատանքը սահմանված ժամանակի ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է գործողությունները տրված հաջորդականությամբ և հիմնավորում այն տրված ժամանակի ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքների ուսուցանումն իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկեր, պրոյեկցիոն սարք և դիդակտիկ պարագաներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կատարել էլեկտրոնային աղյուսակների և ձևերի մշակում, պահպանում որպես նմուշ, հաշվարկային գործողություններ թվային, դրամական, հաշվապահական և այլ տվյալների հետ, օգտագործի ֆունկցիաները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գիշտ է կատարում աղյուսակների ստեղծման և մշակման գործողությունները որևէ գործարարական փաստաթղթի պատրաստման օրինակի վրա:
- Գիշտ է կատարում թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ ներկառուցված ֆունկցիաների օգնությամբ,
- Գիշտ է կատարում էլեկտրոնային աղյուսակի անհրաժեշտ ոճերով ձևավորման աշխատանքները, բազմաէջ փաստաթղթերի համարակալումը, դիտումը տպելուց առաջ և տպումը,
- Գիշտ է կատարում աշխատանքային թերթի հետ պահանջվող գործողությունները,
- Գիշտ է պահպանում աղյուսակը որպես նմուշ հետագա օգտագործման համար,
- Գիշտ է օգտագործում ստանդարտ նմուշները նոր աղյուսակ ստեղծելու համար,
- Գիշտ է կազմակերպում սարքերի հետ անվտանգ աշխատանքը և ինֆորմացիայի պահպանման անվտանգության ապահովման խնդիրը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կառաջադրվի պատրաստել տարբեր քանակի սյուներով և տողերով աղյուսակներ, վարժ ներածել տվյալներ և ձևավորել եզրագծման գործիքների օգտագործմամբ, կատարել թվային արժեքներ պարունակող վանդակների հետ թվաբանական գործողություններ՝ ներկառուցված ֆունկցիաների օգնությամբ, վարժ աշխատել աղյուսակների, վանդակների ու նրանց տվյալների հետ, կառուցել գրաֆիկներ և դիագրամներ, կատարել տեքստի որոշակի հատվածի փնտրման, փոխարինման գործողություններ, ինչպես նաև ստանալ և առաքել փաստաթուղթը:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռքբերված, եթե ուսանողը կարողանա ճիշտ կատարել նշված գործողությունները, ընտրել անհրաժեշտ գործիքները, հաստատել փաստաթղթի սահմանները, ոճերը, օգտագործի դիագրամների կառուցիչը, պաշտպանի աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնները:

Այս առաջադրանքը կատարելիս պետք է ճիշտ ներկայացնի փաստաթղթի մշակման առանձնահատուկ պահերը, որոնք կկիրառվեն նաև նմանօրինակ տիպային փաստաթղթերի պատրաստման դեպքում
Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել տիպային փաստաթղթերի նմուշներ, գրականություն, մեթոդական ուղեցույց և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Կատարել տվյալների հետազոտում, մակրոհիմնադրամների օգտագործում տվյալների կազմակերպման ավտոմատացման համար, աշխատանքային գրքի թերթերի ավելացում, հեռացում, էջի պարամետրերի հաստատում, դիտարկում և տպում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է կատարում տրված աղյուսակում պահանջվող դասակարգման գործողությունը,
- ճիշտ է կատարում աղյուսակում տվյալների գտման գործողությունը տարբեր պայմանների տեղադրումով,
- ճիշտ է կատարում տողերի, սյուների թաքցումը և խմբավորումը,
- ճիշտ է կազմակերպում միջանկյալ արդյունքների որոշման քայլերը,
- ճիշտ է կատարում պայմանով ֆորմատավորում,
- ճիշտ է տեղադրում տվյալների մուտքի արգելման ռեժիմը,
- ճիշտ է կատարում էջի պարամետրերի տեղադրում, համարակալում և դիտարկում տպելուց առաջ
- ճիշտ է օգտագործում տպիչը էլեկտրոնային աղյուսակներ տպելիս,
- պահպանում է աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության ապահովման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի տարբեր որևէ ձևանմուշ, կիրառական աղյուսակի նմուշ, որևէ մաթեմատիկական խնդիր, որը կպահանջվի պատրաստել որոշակի սահմանված ժամանակի ընթացքում: Նա պետք է որոշի աշխատանքային թերթերի անհրաժեշտ անունները, պահպանի գիրքը, ապահովի նրա անվտանգությունը կողմնակի անձանց մուտքից, լուծի առաջադրված խնդիրները, կատարի աղյուսակի անհրաժեշտ ձևավորում:

Պետք է ուշադրություն դարձնել նաև աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնների պահպանման հանգամանքին:

Արդյունքի ուսուցումը կհամարվի բավարար, եթե ուսանողը տրված հանձնարարությունը պատրաստի սահմանված ժամանակի ընթացքում և անսխալ կատարի նշված գործողությունները: Թույլատրելի որոշ շեղումներ, որոնք կապված են նրա բովանդակության լիարժեքության և սահմանված ժամանակի մեջ չտեղավորվելու հետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը խորհուրդ է տրվում կատարել գործնական աշխատանքների ձևով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ պլակատներ, պրոյեկցիոն սարք, ուսումնական տեսաֆիլմ` ցուցադրման սարքերով, համակարգիչ, մեթոդական ձեռնարկ և կիրառական օրինակներ պարունակող գործնական աշխատանքների փաթեթներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	14 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԻՐԱՌՈՎԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ» ԴԱՄԻՉԸ ՏԵ08-007

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը նախատեսում է համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսանողներին սովորեցնել էլեկտրոնային աղյուսակներում կատարած աշխատանքները ավտոմատացնել ստանդարտ ծրագրային միջոցներով: Իր հերթին գիտելիքները կօգտագործվեն տարբեր ծրագրային համակարգերում տվյալների բազային համակարգերի մշակման համար:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեսական ուսուցում՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 30 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Փաստաթղթերի մշակման տեխնոլոգիաներ» և «Էլեկտրոնային աղյուսակներ» մոդուլները:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա մակրոսների ստեղծման, խմբագրման, կատարման, հեռացման միջոցները, ստանդարտ լեզվի հիմնադրույթները, օբյեկտները, օբյեկտային մոդելները, հատկությունները, մեթոդները, ղեկավարման էլեմենտներով աշխատանքը, ձևերը, տվյալների տիպերը, ներածումը, հաստատումները, փոփոխականները, ֆունկցիաները:
2. Կատարի էլեկտրոնային աղյուսակներում հավելվածի մշակում, մշակման ընթացքում ներածում, տարբեր տիպերի ղեկավարման էլեմենտների նկարագրում, աշխատանքային թերթում ղեկավարման էլեմենտների տեղադրում, ղեկավարման էլեմենտի և աշխատանքային թերթի ղեկավարման էլեմենտների տեղադրում, ղեկավարման էլեմենտների և աշխատանքային թերթի վանդակների հետ կապի ստեղծում,
3. Կատարի էկրանային ֆորմաների ստեղծում, օբյեկտների հատկությունների, մեթոդների տեղադրում, եղելությունների կազմում, ծրագրի ստուգում և կարգաբերում, հավելվածների կատարման ավարտ, կոդի պահպանում մոդուլում, պրոցեսորային ստեղծում, փոփոխականի, ֆունկցիաների և միավորված տեքստային տողի օգտագործում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ մակրոսների ստեղծման, խմբագրման, կատարման, հեռացման միջոցները, ստանդարտ լեզվի հիմնադրույթները, օբյեկտները, օբյեկտային մոդելները, հատկությունները, մեթոդները, աշխատանքը ղեկավարման էլեմենտներով, ձևերը, տվյալների տիպերը, ներածումը, հաստատումները, փոփոխականները, ֆունկցիաները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- գիտի մակրոսների ստեղծման, խմբագրման, կատարման, հեռացման միջոցները,
- գիտի ստանդարտ լեզվի հիմնադրույթները, օբյեկտները, օբյեկտային մոդելները,
- գիտի հատկությունները, մեթոդները,
- գիտի ղեկավարման էլեմենտներով աշխատանքը,
- գիտի տվյալների տիպերը,
- գիտի հաստատումները, փոփոխականները, ֆունկցիաները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի հարցաթերտիկ, նշված հարցերի պարունակությամբ, առաջադրելով շարադրել դրա կատարման անհրաժեշտ հաջորդականությունը: Միաժամանակ նա պետք է համակարգչով կատարի առաջադրվող խնդրի լուծումը: Նա պետք է կարողանա.

- Թվարկել օբյեկտա-կողմնորոշիչ ծրագրավորման հիմնական նշանակությունը,
- ծրագրավորել եղելությունները,
- տալ ստանդարտ լեզվի, եղելության, օբյեկտի մեթոդի սահմանումները,
- գրել կոնսուրկցիաներ, որոնք օգտագործվում են օբյեկտներին հատկություններ տեղադրելու համար,
- ստեղծել ֆայլ, օգտագործել օբյեկտային մեթոդների ու հատկությունների կիրառության օրինակներ, որտեղ

օգտագործվում են, հաստատուններ, փոփոխականներ, նկարագրել դրանք,
Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է գործողությունները տրված հաջորդականությամբ և հիմնավորում այն տրված ժամանակի ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքների ուսուցանումն իրականացվում է դասախոսության, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկեր, պրոյեկցիոն սարք և դիդակտիկ պարագաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կատարել էլեկտրոնային աղյուսակներում հավելվածի մշակում, մշակման ընթացքում ներածում, տարբեր տիպերի ղեկավարման էլեմենտների նկարագրում, աշխատանքային թերթում ղեկավարման էլեմենտների տեղադրում, ղեկավարման էլեմենտի և աշխատանքային թերթի ղեկավարման էլեմենտների տեղադրում, ղեկավարման էլեմենտների և աշխատանքային թերթի վանդակների հետ կապի ստեղծում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է կատարում էլեկտրոնային աղյուսակներում հավելվածի մշակում,
- ճիշտ է կատարում տվյալների ներածում մշակման ընթացքում,
- ճիշտ է կատարում տարբեր տիպերի ղեկավարման էլեմենտների նկարագրում,
- ճիշտ է կատարում աշխատանքային թերթում ղեկավարման էլեմենտների տեղադրում,
- ճիշտ է կատարում ղեկավարման էլեմենտի և աշխատանքային թերթի ղեկավարման էլեմենտների տեղադրում,
- ճիշտ է կատարում ղեկավարման էլեմենտների և աշխատանքային թերթի վանդակների հետ կապի ստեղծում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կառաջադրվի հարցաթերթիկ կրճատ նկարագրումով պատասխանների տեղով, որտեղ ուսանողը կնկարագրի նշված հարցերի պատասխանները:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռքբերված, եթե ուսանողը կարողանա ճիշտ կատարել նշված գործողությունները, ընտրել անհրաժեշտ գործիքները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ կատարում է վերը նշված հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր ուսանող պետք է կատարի և իմանա էլեկտրոնային աղյուսակի մշակման տեխնոլոգիային առնչվող ցանկացած հարց: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել մեթոդական ուղեցույց լաբորատոր և գործնական աշխատանքների վերաբերյալ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Կատարել էկրանային ֆորմաների ստեղծում, օբյեկտների հատկությունների, մեթոդների տեղադրում, եղելությունների կազմում, ծրագրի ստուգում և կարգաբերում, հավելվածների կատարման ավարտ, կոդի պահպանում մոդուլում, պրոցեսորային ստեղծում, փոփոխականի, ֆունկցիաների և միավորված տեքստային տողի օգտագործում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է կատարում էկրանային ֆորմաների ստեղծման գործողությունները,
- ճիշտ է կատարում օբյեկտների հատկությունների, մեթոդների տեղադրում,
- ճիշտ է կազմում եղելությունները,
- ճիշտ է կատարում ծրագրի ստուգում և կարգաբերում,

- Ճիշտ է կազմակերպում հավելվածների կատարման ավարտը,
- Ճիշտ է կատարում կողի պահպանումը մոդուլում,
- Ճիշտ է ստեղծում պրոցեդուրա,
- Ճիշտ է օգտագործում փոփոխականները, ֆունկցիաները և միավորված տեքստային տողերը:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի նշված պահանջների պարունակությամբ հարցաթերթիկ: Նա պետք է տա պահանջվող հարցի կրճատ նկարագիրը և հիմնավորի տրված խնդրի լուծումով :

Պետք է ուշադրություն դարձնել նաև աշխատանքի և ինֆորմացիայի անվտանգության կանոնների պահպանման հանգամանքին:

Արդյունքի ուսուցումը կհամարվի բավարար, եթե ուսանողը տրված հանձնարարությունը պատրաստի սահմանված ժամանակի ընթացքում և անսխալ կատարի նշված գործողությունները: Թույլատրելի որոշ շեղումներ, որոնք կապված են նրա բովանդակության լիարժեքության և սահմանված ժամանակի մեջ չտեղավորվելու հետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը խորհուրդ է տրվում կատարել լաբորատոր աշխատանքների ձևով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ պլակատներ, պրոյեկցիոն սարք, ուսումնական տեսաֆիլմ՝ ցուցադրման սարքերով:

Լաբորատոր աշխատանքների կատարման ընթացքում յուրաքանչյուր ուսանող պետք է կատարի բոլոր գործողությունները տարբեր ձևերի գործարար փաստաթղթերի նմուշների վրա, ձեռք բերի բավարար հմտություններ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

**ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՒՔՆԵՐ ԵՎ ՊՐՈՅԵԿՏԻՈՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ»
ՍՈՂՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ**

ԴԱՄԻՉԸ ՏԵ08-008

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը նախատեսված է գծագրի գրաֆիկական ձևավորման գիտելիքների, հմտությունների և գործնական ունակությունների ձեռք բերման համար:

Գծագրական երկրաչափության կանոններով պատկերների կառուցումը նպաստում է առարկաների ձևի և տարածության մեջ նրանց փոխադարձ դասավորության պատկերացման զարգացմանը:

Ուսանողները ծանոթանալու են նաև գծագրի և սխեմաների կատարման ընդհանուր կանոնների հետ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՋՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի դպրոցական ծրագիրը:

ՌԻՍՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա գծագրի գրաֆիկական ձևավորման նորմերը և կանոնները ըստ ԿՓՄՅ-ի ստանդարտների, երկրաչափական կառուցումները, տեխնիկական դետալների եզրագծերի գծագրումը, հարթության վրա տարածական ձևերի տրված պատկերումներով երկրաչափական բնույթի խնդիրների լուծման եղանակների շարադրանքն ու հիմնավորումը, օբյեկտների երկրաչափական մոդելավորումը հարթության վրա և տարածությունում, կատարման կարգը և եղանակները:
2. Կատարի անհատական գրաֆիկական առաջադրանք՝ դետալի եզրագծերի գծագրումը շրջանագծի բաժանումով, լծողումների կառուցումը և չափսերի տեղադրումը, հատվածի և հարթ պատկերի պրոյեկցիաները ըստ կետի կոորդինատների, հարթ պատկերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները, երկրաչափական մարմինների կոմպլեքս գծագիրը և աքսոնոմետրիկ պրոյեկցիաները, մոդելների կոմպլեքս գծագրերի և աքսոնոմետրիկ պրոյեկցիայի կառուցում, դետալի տեխնիկական գծագրի ընթերցումը:
3. Կատարի դետալի տեսքերի, կտրվածքների և հատույթների տեղադրումը և նշանակումը, պարուրակի նշանակումը և պատկերումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ գծագրի գրաֆիկական ձևավորման նորմերը և կանոնները ըստ ԿՓՄԳ-ի ստանդարտների, երկրաչափական կառուցումները, տեխնիկական դետալների եզրագծերի գծագրումը, հարթության վրա տարածական ձևերի տրված պատկերումներով երկրաչափական բնույթի խնդիրների լուծման եղանակների շարադրանքն ու հիմնավորումը, օբյեկտների երկրաչափական մոդելավորումը հարթության վրա և տարածությունում, կատարման կարգը և եղանակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- կարողանում է ձևավորել գրաֆիկական գծագիրը,
- կարողանում է տեղադրել տեխնիկական դետալի եզրագծերը,
- կարողանում է կառուցել լեկալային կորագծերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի գծագիր, առաջարկելով նրա գծագրման հաջորդականությունը, ստանդարտների օգտագործումը մեկնաբանելով նրա պահանջները և կանոնները, որոնք երաշխավորում են գծագրի որակը:

Ստորև բերվում է հիմնական կանոնների բովանդակությունը.

- գծագրերի վրա բաղկացուցիչ մասերի տեղաբաշխումը
- ֆորմատի ճիշտ ընտրությունը
- գծագրական գծերի ճիշտ օգտագործումը
- գծագրի կառուցման հերթականությունը
- չափսերի ճիշտ տեղադրումը
- մասնագրի լրացման կարգը և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հետևում է վերը նշված կանոններին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, ստանդարտներ, դիդակտիկ պարագաներ, պլակատներ, գրենական պիտույքներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կատարել անհատական գրաֆիկական առաջադրանք՝ դետալի եզրագծերի գծագրումը շրջանագծի բաժանումով, լծորդումների կառուցումը և չափսերի տեղադրումը, հատվածի և հարթ պատկերի պրոյեկցիաները ըստ կետի կոորդինատների, հարթ պատկերի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները, երկրաչափական մարմինների կոմպլեքս գծագիրը և աքսոնոմետրիկ պրոյեկցիաները, մոդելների կոմպլեքս գծագրերի և աքսոնոմետրիկ պրոյեկցիայի կառուցում, դետալի տեխնիկական գծագրի ընթերցումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի կետի, հատվածի և հարթության պրոյեկտումը,
- գիտի գծագրի փոփոխման եղանակները,
- գիտի աքսոնոմետրիկ պրոյեկցիաները,
- կատարում է երկրաչափական մարմինների պրոյեկտումը և աքսոնոմետրիան,
- կատարում է երկրաչափական մարմինների հատումը հարթությամբ,
- կատարում է մակերևույթների փոխհատումը,
- կատարում է մոդելի մասնատումը ըստ երկրաչափական մարմնի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ուսանողին տրվում է առաջադրանք երկրաչափական մարմնի հատումը պրոյեկցող հարթությամբ: Առաջադրանքը կգնահատվի, եթե ճիշտ են կատարված հատույթի պրոյեկցիաները, իրական մեծության որոշումը և հատած մարմնի աքսիոնոմետրիայի կատարումը: Մոդելների կոմպլեքս գծագրի և աքսիոնոմետրիայի կատարում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին գիտելիքներ տալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, պլակատներ, դիդակտիկ նյութեր, մոդելներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական աշխատանք 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Կատարի դետալի տեսքերի, կտրվածքների և հատույթների տեղադրումը և նշանակումը, պարուրակի նշանակումը և պատկերումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- կարողանում է դետալի տեխնիկական գծագիրը ճիշտ կատարել և ընթերցել,
- տեղադրում և նշանակում է տեսքեր, կտրվածքներ և հատույթներ,
- կատարում է պարուրակի նշանակումը և պատկերումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ուսանողին տրվում է առաջադրանք դետալ պարուրակով: Պետք է կատարել այդ դետալի կտրվածքը, եթե անհրաժեշտ է նաև հատույթը: Ճիշտ կատարման դեպքում առաջադրանքը գնահատվում է բավարար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, պլակատներ և դիդակտիկ նյութեր, մոդելներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական աշխատանք 12 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ» ՍՈՂՈՒԼԻ ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԻՉԸ ՏԷ08-009

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են կուրսային, դիպլոմային և գործնական աշխատանքներ կատարելու համար:

Ուսանողը պետք է կարողանա ճիշտ կազմել և կարդալ դետալների տեխնիկական գծագրերը, հավաքական գծագրերը, սխեմաները:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

Գործնական աշխատանք`32 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

ՉՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է

1. իմանա գծագրի կատարման ընդհանուր կանոնները, դետալի ճշգրիտ նշանակությունը և աշխատանքային գծագրին ներկայացվող տեխնիկական պահանջները, դետալների տարբեր միացումների նշանակությունը, հավաքական գծագրի կատարումը և ձևավորումը, հավաքական գծագրի դետալավորումը, սխեմաներին ներկայացվող տեխնիկական պահանջները,
2. կարողանա գծել հանգույցի դետալների էքսիզները, կատարել նրանց միացման հանգույցի հավաքման գծագիրը, գծագրի ձևերը և լրացնի մասնագիրը և սպեցիֆիկացիան,
3. կարողանա ընթերցել գծագրերը ըստ ստանդարտների և լրացնել սպեցիֆիկացիա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ գծագրի կատարման ընդհանուր կանոնները, դետալի ճշգրիտ նշանակությունը և աշխատանքային

գծագրին ներկայացվող տեխնիկական պահանջները, դետալների տարբեր միացումների նշանակությունը, հավաքական գծագրի կատարումը և ձևավորումը, հավաքական գծագրի դետալավորումը, սխեմաներին ներկայացվող տեխնիկական պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է գծում դետալի գծագիրը,
- գիտի էսքիզի իրականացման հերթականությունը և կարգը,
- ճիշտ է իրականացնում դետալի աշխատանքային գծագիրը,
- ճիշտ է պատկերում միացումների ամրակային դետալները,
- պատկերում է պարուրակը ամրակային դետալների վրա,
- օգտագործում է ստանդարտները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Տրվում է դետալ, պետք է կատարվի նրա աշխատանքային գծագիրը: Առաջադրանքը գնահատվում է բավարար, եթե ճիշտ կատարված են դետալի կտրվածքները, հատույթները, գծագիրը համապատասխանում է տեխնիկական և գրաֆիկական ձևավորման պահանջներին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, ստանդարտներ, դիդակտիկ նյութեր, պլակատներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական աշխատանք 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ գծել հանգույցի դետալների էսքիզները, կատարել նրանց միացման հանգույցի հավաքման գծագիրը, գծագրի ձևերը և լրացնի մասնագիրը և սպեցիֆիկացիան:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ է գծում հավաքական հանգույցի դետալների էսքիզները,
- կատարում է հավաքական գծագրեր,
- տեղադրում է գծագրի չափսերը,
- իրականացնում է հավաքական գծագրի դետալավորում,
- գծագրում է դետալներ,
- կառուցում է ակսոնոմետրիա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Տրվում է հավաքական հանգույց, պետք է կատարվի դետալների էսքիզները և հավաքական գծագիրը: Առաջադրանքը գնահատվում է բավարար, եթե առաջադրանքը բավարարում է հավաքական գծագրին ներկայացվող տեխնիկական պահանջները, մասնագրի և սպեցիֆիկացիայի լրացման կարգի պահանջները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, ստանդարտներ, դիդակտիկ նյութեր, պլակատներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական աշխատանք 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Կարողանա ընթերցել գծագրերը ըստ ստանդարտների և լրացնել սպեցիֆիկացիա:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի սխեմաների տարրերի գրաֆիկական նշանակումը ըստ ստանդարտների,
- գիտի սխեմաների կատարման համար ներկայացվող տեխնիկական պահանջները,
- կարողանում է լրացնել սպեցիֆիկացիա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Տրվում է հավաքական գծագիր, պետք է կատարել առանձին դետալի աշխատանքային գծագիրը և արքիոնոմետրիան: Ճիշտ կատարելով տեխնիկական պահանջները, առաջադրանքը գնահատվում է բավարար:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, ստանդարտներ, դիդակտիկ նյութեր, պլակատներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական աշխատանք` 10 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔԻ ՇՂԹԱՆԵՐ»

ԴԱՍԻՉԸ ՏԵՕ8-010

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը նախատեսված է էլեկտրատեխնիկայի հաստատուն հոսանքի շղթաները ուսումնասիրելու և գործնական աշխատանքներ կատարելու համար: Ուսանողը պետք է ուսումնասիրի էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները, էլեմենտների պայմանական նշանները շղթաներում, էլեկտրական մեծությունները և նրանց միավորները:

Ուսանողը պետք է կարողանա կարգալ էլեկտրական շղթան, օգտվել խնդիրների տվյալներից, հաշվել հաստատուն հոսանքի շղթաները ըստ հաշվարկման մեթոդների, ինքնուրույն հավաքել էլեկտրական պարզագույն շղթաները, չափել, վերցնել սարքերի ցուցմունքները և դրանք գրանցել աղյուսակներում:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

Տեսական ուսուցում`	24 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ
Լաբորատոր աշխատանք`	8 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ **ՉՈՒՆԻ**

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է`

1. իմանա պարզագույն էլեկտրական շղթան, շղթաներում աշխատանքային ռեժիմները, էլշունները, դիմադրությունները և նրանց միացումները, ինչպես նաև շղթաների հաշվարկման մեթոդները` Կիրխոֆի օրենքներով, հանգուցային լարումների, վերադրման, եռանկյունաձև-աստղաձև փոխարինման մեթոդով:
2. կարողանա շղթաներում նշված մեթոդներով կատարել գործնական աշխատանքներ: Հաշվել, տարբերակել դիմադրությունը, հոսանքը, լարումը, հզորությունը: Տարբերակել հաջորդական, զուգահեռ և խառը միացումները, ինչպես նաև կատարել աստղաձև միացման փոխարինում եռանկյունաձևի և հակառակը:
3. կարողանա օգտվել չափիչ սարքերից. ինքնուրույն հավաքել պարզագույն էլեկտրական շղթաներ, և գրանցել չափիչ սարքերի ցուցմունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ պարզագույն էլեկտրական շղթան, շղթաներում աշխատանքային ռեժիմները, էլշունները, դիմադրությունները և նրանց միացումները, ինչպես նաև շղթաների հաշվարկման մեթոդները` Կիրխոֆի օրենքներով, հանգուցային լարումների, վերադրման, եռանկյունաձև-աստղաձև փոխարինման մեթոդով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԵՐ

- Գիտի էլեկտրատեխնիկայի պարզագույն շղթան, աշխատանքային ռեժիմները, պարամետրերը, միավորները:
- գիտի օրենքները հաշվարկման մեթոդները, միացման ձևերը (ճյուղավորված և չճյուղավորված շղթաները):
- Գիտի չափիչ սարքերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը պետք է կարողանա նախօրոք կազմված հարցաշարով պատասխանել հարցերին, ճշգրիտ տարբերել հաշվարկման մեթոդները, աշխատանքային ռեժիմները, ճյուղավորված և չճյուղավորված շղթաները, չափիչ սարքերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսությունների միջոցով, յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով յուրահատուկ մոտեցում, տրամադրելով գրականություն, մեթոդական ուղեցույց, լաբորատոր սարքեր և սարքավորումներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կարողանալ շղթաներում նշված մեթոդներով կատարել գործնական աշխատանքներ: Հաշվել, տարբերակել դիմադրությունը, հոսանքը, լարումը, հզորությունը: Տարբերակել հաջորդական, զուգահեռ և խառը միացումները, ինչպես նաև կատարել աստղաձև միացման փոխարինում եռանկյունաձևի և հակառակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԵՐ

- Վարժ հաշվել` շղթայի ընդհանուր դիմադրությունը:
- Հաշվել հոսող հոսանքները:
- Հաշվել սպառիչների վրա ընկած լարումները:

- Հաշվել հզորությունը:
- Ստուգել ինքնուրույն ստացված արդյունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի խնդիր և մեթոդական ուղեցույց: Ուսանողը պետք է կարողանա ճշգրիտ հաշվել շղթաների պարամետրերը (անցնող հոսանքները, լարումները) և կարողանա ստուգել հաշվարկման արդյունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով յուրահատուկ մոտեցում, տրամադրելով գրականություն, մեթոդական ուղեցույց:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ
Լաբորատոր աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Կարողանալ օգտվել չափիչ սարքերից. ինքնուրույն հավաքել պարզագույն էլեկտրական շղթաներ, և գրանցել չափիչ սարքերի ցուցմունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ճիշտ տարբերում է էլեկտրական չափիչ սարքերը,
- ճիշտ և վարժ հավաքում է էլեկտրական շղթաները,
- ճիշտ և վարժ վերցնում է էլեկտրական մեծությունների արժեքները չափիչ սարքերից,
- ճիշտ և վարժ չափվող մեծությունների արժեքները տեղադրում է աղյուսակներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի լաբորատոր աշխատանքների ուղեցույց, համակարգչային Multisim ծրագրերով հավաքում է անհրաժեշտ էլեկտրական շղթան և այնտեղից ճշգրիտ վերցնում չափման արդյունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը իրականացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով յուրահատուկ մոտեցում, տրամադրելով համակարգիչ գրականություն, լաբորատոր աշխատանքների ուղեցույց:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Լաբորատոր աշխատանք`	4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓՈՓՈԽԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՇՂԹԱՆԵՐ»

ԴԱՄԻՉԸ ՏԵՕ8-011

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը մշակվել է էլեկտրատեխնիկայի փոփոխական հոսանքի շղթաները ուսումնասիրելու համար՝ օգտագործելով էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները և մեթոդները: Ուսանողը պետք է ուսումնասիրի փոփոխական հոսանքի շղթաները (ճյուղավորված և չճյուղավորված), եռաֆազ շղթայի ռեժիմները, գծային շղթաները, ունակությունները և նրանց միացումները, անցողիկ պրոցեսները:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`	Տեսական ուսուցում` 48 ժամ
	Գործնական աշխատանք` 10 ժամ
	Լաբորատոր աշխատանք` 14 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Հաստատուն հոսանքի շղթաներ» մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է`

1. իմանա մագնիսական դաշտը, ուժագծերի հատկությունները, մագնիսական դաշտը բնութագրող մեծությունները: Էլեկտրամագնիսականության երևույթը, էլեկտրամագնիսական ինդուկցիայի երևույթը, ինդուկցիայի և փոխինդուկցիայի երևույթները: Ինդուկտիվությունները և նրանց միացումները: Ունակությունները և նրանց միացումները:
2. իմանա փոփոխական հոսանքի ստացումը, նրա արժեքները, փոփոխական հոսանքի ճյուղավորված և չճյուղավորված պարզագույն շղթաները: Ռեզոնանսի երևույթը և նրա տեսակները: Ֆերոռեզոնանսի երևույթը և նրա տեսակները:
3. իմանա եռաֆազ շղթան, նրա տեսակները և ռեժիմները: Շղթաների հաշվարկման սիմվոլիկ մեթոդը:
4. իմանա քառաբևեռները, նրա տեսակները և հաշվարկման մեթոդը: Ոչ սինուսոիդական լարումները և հոսանքները:
5. իմանա ոչ գծային շղթաները, նրանց միացումները: Անցողիկ պրոցեսները: Կոմուտացիայի օրենքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ մագնիսական դաշտը, ուժագծերի հատկությունները, մագնիսական դաշտը բնութագրող մեծությունները: Էլեկտրամագնիսականության երևույթը, էլեկտրամագնիսական ինդուկցիայի երևույթը, ինդուկցիայի և փոխինդուկցիայի երևույթները: Ինդուկտիվությունները և նրանց միացումները: Ունակությունները և նրանց միացումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի մագնիսական դաշտը, ուժագծերի հատկություններ,
- գիտի մագնիսական դաշտը բնութագրող մեծությունները,
- գիտի էլեկտրամագնիսականության երևույթը:
- էլեկտրամագնիսական ինդուկցիա, ինքնինդուկցիայի և փոխինդուկցիայի երևույթները:
- ինդուկտիվությունները և նրանց միացումները, ունակությունները և նրանց միացումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը պետք է կարողանա հարց ու պատասխանով ճշգրիտ տարբերի մագնիսական դաշտը բնութագրող մեծությունները, էլեկտրամագնիսականության երևույթը, էլեկտրամագնիսական ինդուկցիայի, ինքնինդուկցիայի և փոխինդուկցիայի երևույթները, ինդուկտիվությունները և նրանց միացումները, ունակությունները և նրանց միացումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների միջոցով, նպատակ ունենալով յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով յուրահատուկ մոտեցում, տրամադրելով գրականություն:

ՈՒՄՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ
Լաբորատոր աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Իմանալ փոփոխական հոսանքի ստացումը, նրա արժեքները, փոփոխական հոսանքի ճյուղավորված և չճյուղավորված պարզագույն շղթաները: Ռեզոնանսի երևույթը և նրա տեսակները: Ֆերոռեզոնանսի երևույթը և նրա տեսակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի փոփոխական հոսանքի ստացումը, փոփոխական հոսանքի բոլոր արժեքները
- գիտի հաշվել պարզագույն փոփոխական հոսանքի ճյուղավորված և չճյուղավորված շղթաները
- գիտի ռեզոնանսի երևույթը, հաշվում է ռեզոնանսային ունակությունը
- գիտի ֆերոռեզոնանսի երևույթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը պետք է իմանա հարց ու պատասխանով, տրված շղթաներով փոփոխական հոսանքի արժեքները, փոփոխական հոսանքի ճյուղավորված և չճյուղավորված պարզագույն շղթաները, ռեզոնանսի և ֆերոռեզոնանսի երևույթները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերել յուրահատուկ մոտեցում, տրամադրելով մեթոդական ուղեցույց, լաբորատոր աշխատանքների ուղեցույց. խնդիրներ գործնական աշխատանքների համար:

ՈՒՄՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ
Լաբորատոր աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Իմանալ եռաֆազ շղթան, նրա տեսակները և ռեժիմները: Շղթաների հաշվարկման սիմվոլիկ մեթոդը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի եռաֆազ փոփոխական հոսանքի շղթաները,
- գիտի նրա աշխատանքային ռեժիմները
- գիտի հաշվել ֆազաներում ընդհանուր դիմադրությունները, ֆազային և գծային հոսանքները, լարումները և հզորությունները
- գիտի կառուցել նրանց վեկտորական դիագրամները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի շղթան: Նա պետք է իմանա հարց ու պատասխանով եռաֆազ շղթայի եռունկյունաձև և աստղաձև միացումները, նրանց համապատասխան գծային և ֆազային հոսանքները և լարումները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների, գործնական պարապմունքների և լաբորատոր աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերել յուրահատուկ մոտեցում, տրամադրելով մեթոդական ուղեցույց, համակարգիչ, լաբորատոր աշխատանքների ուղեցույց, խնդիրներ գործնական աշխատանքների համար:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ
Լաբորատոր աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Իմանալ քառաբևեռները, նրա տեսակները և հաշվարկման մեթոդը: Ոչ սինուսոիդական լարումները և հոսանքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի քառաբևեռները և նրա հաշվարկման մեթոդը
- գիտի ոչ սինուսոիդական հոսանքները, լարումները, հզորությունները
- գիտի ունակության տեսակները և նրանց միացումները, ոչ գծային էլեմենտները և նրանց շղթաները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը ճշգրիտ պետք է տարբերի հարց ու պատասխանով քառաբևեռները, նրանց տեսակները, հավասարումները: Կարողանա կատարել հաշվարկներ: Իմանա ոչ սինուսոիդական լարումները, հոսանքները և կարողանա որոշել նրանց գործող արժեքները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսության, մեթոդական ուղեցույցով գործնական աշխատանքների միջոցներով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ
Լաբորատոր աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5

Իմանալ ոչ գծային շղթաները, նրանց միացումները: Անցողիկ պրոցեսները: Կոմուտացիայի օրենքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի ոչ գծային շղթաները և նրանց միացումները
- գիտի օգտվել Վոլտ-Ամպերային բնութագրերից և աղյուսակներից
- գիտի անցողիկ պրոցեսները
- գիտի կոմուտացիայի օրենքները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի էլեկտրական շղթա և նա պետք է հարց ու պատասխանով տարբերի ոչ գծային էլեմենտների միացումները: Գիտի անցողիկ պրոցեսները և կոմուտացիայի օրենքները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների, լաբորատոր աշխատանքների միջոցով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	10 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ
Լաբորատոր աշխատանք`	4 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԻՍԱԳԱՂՈՐԴՉԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ: ԴԻՈՂԻ ԵՎ ՏՐԱՆՁԻՍՏՈՐԻ ԴԵՐԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶՐՈՒՆՔԸ»

ԴԱՍԻՉԸ ՏԷ08-012

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

